ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/148

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Ջրային կոմիտե
Մասնակից՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9115-2021 գրությամբ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ջրային կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.06.2021թ.-ի թիվ 01/17/2029-2021 գրության հիման վրա, 07.06.2021թ.-ին «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 07.06.2021թ.-ին:

08.06.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/148 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

16.06.2021թ.-ին և 02.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.07.2021թ.-ին:

2. Ջրային կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Ջրային կոմիտեն 01.06.2021թ.-ի թիվ 01/17/2029-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը տեղեկացնում եմ.

Ջրային կոմիտեի կարիքների համար SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ» ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2021 թվականի մայիսի 11-ին, ժամը 16:30-ին: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել մեկ ընկերություն՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն: Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ հավելված N 1, հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը, գնային առաջարկը՝ հավելված N 2, և բացակայում են հրավերով սահմանված՝ «Մասնագիտական փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը:

Համաձայն ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետի՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 13.05.2021թ., շտկել անհամապատասխանությունները: Այդ մասին հանձնաժողովը «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին պատշաճ ծանուցել է Armeps համակարգի և էլեկտրոնային փոստի միջոցով: Սակայն «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից չեն շտկվել անհամապատասխանությունները՝ չեն ներկայացվել «Մասնագիտական փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը:

Համաձայն ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.10 կետի՝ 17.05.2021թ. թիվ 2 որոշմամբ գնահատող հանձնաժողովը «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է (հրավերի պահանջներին անհամապատասխանության հիմքով):»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 16.06.2021թ.-ի թիվ 03/17/2318-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

««Բագարանի բարիք» ՓԲԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի (ՍՅ-ԼՕ-2021/148) վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Ջրային կոմիտեի կարիքների համար ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարության և

հրավերի տեքստերը հրապարակվել են 2021 թվականի մայիսի 4-ին: Նշված ընթացակարգի մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2021 թվականի մայիսի 11-ին, ժամը 16:30-ին և մասնակցության հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն, ընկերության ներկայացրած հայտում բացակայել են «Մասնագիտական փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը: Համաձայն ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 8.9 կետի՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակցին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 13.05.2021թ. շտկել անհամապատասխանությունները, որի մասին ընկերությանը պատշաճ ծանուցվել է (Armeps համակարգով և էլեկտրոնային փոստով): Մինչև կասեցման ժամկետի ավարտը հրավերով սահմանված կարգով «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները, որն էլ հիմք է հանդիսացել համաձայն ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով հրավերի 8.10 կետի՝ այն է «Սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:», «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը մերժելու համար:

Նշված ընթացակարգով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույն համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «40» միավոր՝ լավագույն առաջարկի դեպքում: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները, «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույն համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «30» միավոր՝ լավագույն առաջարկի դեպքում և գնային առաջարկին տրվող միավորը՝ «30»: Մասնագիտական փորձառություն, աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշների հանրագումարը «70» միավոր է լավագույն առաջարկի դեպքում և նվազագույնը՝ «60», որն էլ կգնահատի մասնակցի որակավորման չափանիշները (կարողությունները), սակայն «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն չի ապահովել ստանձնած պարտավորությունը և չի ներկայացրել մասնագիտական փորձառություն, աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և ընկերությունը գնահատող հանձնաժողովի վերլուծությամբ չէր կարող ապահովել մրցույթի պայմանները համապատասխան համամասնությամբ՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն մասնագիտական

փորձառություն և աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշների համար չի ապահովում մրցույթի մասնակցության հրավերի 2.4.1 կետի «գնահատման ամփոփ աղյուսակի» նվազագույն գնահատման 60 միավորի շեմը (համապատասխան համամասնությամբ): Տվյալ դեպքում, փաստացի մասնակցի բոլոր չափանիշներով գնահատման ամփոփ միավորը չէր ապահովի գնահատման ամփոփ աղյուսակում սահմանված համամասնության նվազագույն շեմը, մրցույթի մասնակցության հրավերի 2.4.1 կետի պահանջների համաձայն, ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականը (մասնակցին տրվող գնահատականը բոլոր չափանիշների հանրագումարի արդյունքով) կլինի ամենաբարձրը:

Հարկ է նշել.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը,

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 28-րդ կետի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

ՀՀ կառավարության 2017 թվականի 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (հետայսու՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում

որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը և կարգի 42-րդ կետի՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պահպանել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ինչպես նաև Օրենքի և Կարգի վերը նշված դրույթները, որի արդյունքում «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

Միաժամանակ անդրադառնալով ընկերության կողմից ներկայացված բողոքում նշված, «համանման» ՍՅ-ՆԳ-2020/74 որոշմանը (հետայսու՝ որոշում), քննարկումից պարզ է դառնում, որ դրանում արձանագրված փաստական և իրավական հիմնավորումները բացարձակապես տարբեր են սույն գործով բարձրացված խնդիրներից, հետևաբար այն ոչ մի ընդհանրություն չունի սույն բողոքում բերված փաստարկների հետ:

«ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից 27.05.2021թ. ներկայացված և վարույթ ընդունված բողոքը, բողոքը քննող անձի կողմից՝ 08.06.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/34 որոշմամբ բավարարվել է և դադարեցվել է վերջինիս հայտը մերժելու մասին որոշումը:»:

3. <u>«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2021թ.-

ի թիվ 26/26-1/9115-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը, 14.06.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Ջրային կոմիտեի կարիքների համար «Տեխնիկական հսկողության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝

«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են մասնագիտական փորձառություն, աշխատանքային ռեսուրս որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահնված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով Հրավերի 8.9-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ չի ներկայացրել մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրս որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահնված փաստաթղթերը:

«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից 27.05.2021թ. ներկայացվել է բողոք հետևյալ բովանդակությամբ.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացին ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ երկու ոչ գնային չափանիշի մասով՝ մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրս:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացրել՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Իսկ այնուհետև արձանագրել, որ՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, այսինքն՝ չի ներկայացրել մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրս որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահնված փաստաթղթերը: Վերոհիշյալի հիման վրա «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժել է:

Տվյալ Ընթացակարգի հրավերի 2.4.1-րդ կետի համաձայն՝ ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝

ա. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «40» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները,

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող առնվազն երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նմանատիպ են համարվում հիդրոտեխնիկական կառուցվածքների կամ կառուցման, կամ ամբողջական կամ մասնակի վերակառուցման, կամ ամբողջական կամ մասնակի ուժեղացման, կամ ամբողջական կամ մասնակի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ մատուցված ծառայությունը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում:

<<Աշխատանքային ռեսուրսների>> վերաբերյալ նվազագույն պահանջներ՝

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «30» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները

3. <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումն ունեցող աշխատանքային ռեսուրսները.

Մասնագետների որակավորումը	Պահանջվող կրթությունը	Ըստ մասնագիտության նվազագույն աշխատանքային սպաժը, տարի	Մասնագետ-ների նվազագույն քանակը, մարդ	Մասնագետների գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
Ինժեներ - հիդրոտեխնիկ	բարձրագույն	առնվազ 3	8	հիդրոտեխնիկական ոլորտում մատուցված ծառայության
Ավտոմատ համակարգերի կառավարման ինժեներ	որակավորված	առնվազ 3	4	Ավտոմատ համակարգերի կառավարման ոլորտում

բ) մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

<u>Գնահատման ամփոփ աղյուսակ</u>

Հ/Հ	Չափանիշներ	Նվազագույն գնահատական	Առավելագույն գնահատական	Պահանջվող փաստաթղթերի լրակազմի համապատասխանության գնահատում
1	Համապատասխանության չափանիշներ			

	Մասնագիտական փորձառություն			
1.1	Նմանատիպ փորձառություն	35	40	
1.2	Լիցենզիա և լիցենզիայի ներդիր	-	+	բավարար/անբավարար
2	Աշխատանքային ռեսուրսներ (ՏԱ)	25	30	
2.1	Աշխատակազմ (ՏԱ)	25	30	
3	Գնային առաջարկ (ԳԱ)	-	30	
3.1	Գնային առաջարկ (ԳԱ)	-	30	
			100	

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Եթե մասնակցի կողմից ներկայացված ոչ գնային պայմանները բավարարող փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ նախ, մասնագիտական փորձառությունը և աշխատանքային ռեսուրսը հանդիսանում են մասնակցի ոչ գնային պայման:

Իսկ Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետը իմպերատիվ սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, այլ ընդամենը ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա և նույնիսկ անհամապատասխանություն արձանագրվելու հիմքով տրված շտկումը չկատարելու դեպքում այն չի մերժվում, այլ գնահատվում է զրո:

Այլ կերպ ասած, եթե մասնակցի մոտ բացակայել է որևէ ոչ գնային պայման, փվյալ դեպքում մասնագիտական փորձառությունը և աշխատանքային ռեսուրսը, ապա

ղեկավարվելով Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի իմպերատիվ պահանջներով, գնահատող հանձնաժողովը ոչ թե պետք է մերժեր մասնակցի հայտը, այլ իրականացնելով ոչ գնային պայմանների գնահատում, հաներ համապատասխան միավորը տվյալ չափանիշի մասով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր և արձանագրվել է, որ որ մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք /օրինակ, ՍՅ-ՆԳ-2020/74, /:

Վերոհիշյալի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»

Բողոքով խնդրել ենք պարտավորեցնել ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժելու և ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանը 08.06.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/34 որոշմամբ, բավարել է «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի 27.05.2021թ. ներկայացրած բողոքը և պարտավորեցրել է ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժելու և ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյա:

Ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշել ենք, Ջրային կոմիտեի կարիքների համար «Տեխնիկական հսկողության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝

«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են մասնագիտական փորձառություն, աշխատանքային ռեսուրս որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահնված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով Հրավերի 8.9-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ չի ներկայացրել մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրս որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահնված փաստաթղթերը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել հետևյալի վրա.

Նախ, «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից 27.05.2021թ. ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է Ընթացակարգով «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, մասնավորապես, բողոքով խնդրել ենք պարտավորեցնել ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժելու և ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանը 08.06.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/34 որոշմամբ, բավարարել է «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի 27.05.2021թ. ներկայացրած բողոքը, որով դադարեցվել է ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Այսինքն, տվյալ պարագայում վերացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքը, քանի որ այլև առկա չէ հայտը մերժելու մասին որոշումը, այսինքն գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը այլևս դադարեցված չէ: :

Ուստի, նման պայմաններում, «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին չի կարող վերագրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և այս հիմքով վերջինս չի կարող ներառվել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բ) Բացի այդ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ,մերժելով «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը ,ի սկզբանե խախտել էր գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացա-կարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացին ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ երկու ոչ գնային չափանիշի մասով՝ մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրս:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացրել՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխա-նությունները:

Իսկ այնուհետև արձանագրել, որ՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, այսինքն՝ չի ներկայացրել մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրս որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահնված փաստաթղթերը: Վերոհիշյալի հիման վրա «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժել է:

Տվյալ Ընթացակարգի հրավերի 2.4.1-րդ կետի համաձայն՝ ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝

ա. «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «40» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները,

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող առնվազն երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նմանատիպ են համարվում հիդրոտեխնիկական կառուցվածքների կամ կառուցման, կամ ամբողջական կամ մասնակի վերակառուցման, կամ ամբողջական կամ մասնակի ուժեղացման, կամ ամբողջական կամ մասնակի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ մատուցված ծառայությունը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում:

<<Աշխատանքային ռեսուրսների>> վերաբերյալ նվազագույն պահանջներ՝

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «30» միավոր՝ լավագույն առաջարկ: Լավագույն առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր մասնակիցների որակավորումները

3. <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումն ունեցող աշխատանքային ռեսուրսները.

Մասնագետների որակավորումը	*Պահանջվող կրթությունը*	*Ըստ մասնագիտության նվազագույն աշխատանքային ստաժը, տարի*	*Մասնագետ-ների նվազագույն քանակը, մարդ*	*Մասնագետների գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը*
Ինժեներ - հիդրոտեխնիկ	*բարձրագույն*	*առնվազ 3*	*8*	*հիդրոտեխնիկական ոլորտում մատուցված ծառայության*
Ավտոմատ համակարգերի	*որակավորված*	*առնվազ 3*	*4*	*Ավտոմատ համակարգերի կառավարման ոլորտում*

կառավարման ինժեներ				

բ) մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

Գնահատման ամփոփ աղյուսակ

Հ/Հ	Չափանիշներ	Նվազագույն գնահատական	Առավելագույն գնահատական	Պահանջվող փաստաթղթերի լրակազմի համապատասխանության գնահատում
1	Համապատասխանության չափանիշներ			
	Մասնագիտական փորձառություն			
1.1	Նմանատիպ փորձառություն	35	40	
1.2	Լիցենզիա և լիցենզիայի ներդիր	-	+	բավարար/անբավարար
2	Աշխատանքային ռեսուրսներ (ՏԱ)	25	30	
2.1	Աշխատակազմ (ՏԱ)	25	30	
3	Գնային առաջարկ (ԳԱ)	-	30	
3.1	Գնային առաջարկ (ԳԱ)	-	30	
			100	

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Եթե մասնակցի կողմից ներկայացված ոչ գնային պայմանները բավարարող փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ նախ, մասնագիտական փորձառությունը և աշխատանքային ռեսուրսը հանդիսանում են մասնակցի ոչ գնային պայման:

Իսկ Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետը իմպերատիվ սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, այլ ընդամենը ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա և նույնիսկ անհամապատաս-խանություն արձանագրվելու հիմքով տրված շտկումը չկատարելու դեպքում այն չի մերժվում, այլ գնահատվում է զրո:

Այլ կերպ ասած, եթե մասնակցի մոտ բացակայել է որևէ ոչ գնային պայման, տվյալ դեպքում մասնագիտական փորձառությունը և աշխատանքային ռեսուրսը, ապա ղեկավարվելով Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի իմպերատիվ պահանջներով, գնահատող հանձնաժողովը ոչ թե պետք է մերժեր մասնակցի հայտը, այլ իրականացնելով ոչ գնային պայմանների գնահատում, հաներ համապատասխան միավորը տվյալ չափանիշի մասով:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ բողոքներ քննող անձի կողմից հենց այս հիմքով է 08.06.2021թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/34 որոշմամբ բավարարվել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից 27.05.2021թ. ներկայացված բողոքը և դադարեցվել է վերջինիս հայտը մերժելու մասին որոշումը:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Ջրային կոմիտեի կողմից տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.05.2021թ.-ին հայտարարվել է «ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4.1 ենթակետով սահմանվել է հետևյալը.

«Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներ՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «40» միավոր՝ լավագույն առաջարկ:

«Աշխատանքային ռեսուրսների» վերաբերյալ նվազագույն պահանջներ՝

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «30» միավոր՝ լավագույն առաջարկ:

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

(…)

Անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո»:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.05.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ հավելված 1-ի հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը, գնային առաջարկը՝ հավելված 2-ը, սակայն բացակայում են «Մասնագիտական

փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը:

v. Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի bagaranibariq@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում:

vii. Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Մասնասկցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել՝ չեն ներկայացվել «Մասնագիտական փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժել:

viii. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.06.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/34 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից 27.05.2021թ. ներկայացված բողոքը, Ջրային կոմիտեի կողմից 01.06.2021թ. թիվ 01/17/2052-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, արձանագրել է, որ թեև Ընթացակարգի հրավերով նախատեսվել են ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներ, միևնույն ժամանակ, նույն հրավերով սահմանվել է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, այլ դրանք հայտով չներկայացվելու դեպքում, մասնակցին առաջարկվում է շտկել անհամապատասխա-նությունները և եթե անհամապատասխանությունները շտկվում են մասնակցի ոչ գնային պայմանները գնահատվում են հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները գնահատվում են զրո: Նման պայմաններում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ Մասնակցի հայտը ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝ «Մասնագիտական փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը, չներկայացնելու հիմքով մերժելը, իրավաչափ չեն, որպիսի

պայմաններում խախտվել են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները, հետևաբար նաև՝ Մասնակցի իրավունքները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9115-2021 գրությամբ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով

իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ջրային կոմիտեի կողմից տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.05.2021թ.-ին հայտարարված «ՋԿ-ԳՀԾՁԲ-21/4-Տ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4.1 ենթակետով սահմանվել է հետևյալը.

«Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներ՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «40» միավոր՝ լավագույն առաջարկ:

«Աշխատանքային ռեսուրսների» վերաբերյալ նվազագույն պահանջներ՝

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանող մասնակցի որակավորումը գնահատվում է «30» միավոր՝ լավագույն առաջարկ:

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

(…)

Անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակցի ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո»: Հանձնաժողովի 17.05.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են «Մասնագիտական փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի bagaranibariq@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում: Սակայն Մասնասկցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել՝ չեն ներկայացվել «Մասնագիտական փորձառություն», «Աշխատանքային ռեսուրսներ»

որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժել:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.06.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/34 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից 27.05.2021թ. ներկայացված բողոքը, Ջրային կոմիտեի կողմից 01.06.2021թ. թիվ 01/17/2052-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, արձանագրել է, որ թեև Ընթացակարգի հրավերով նախատեսվել են ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներ, միևնույն ժամանակ, նույն հրավերով սահմանվել է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, այլ դրանք հայտով չներկայացվելու դեպքում, մասնակցին առաջարկվում է շտկել անհամապատասխանությունները և եթե անհամապատասխանությունները շտկվում են մասնակցի ոչ գնային պայմանները գնահատվում են հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները գնահատվում են զրո: Նման պայմաններում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ Մասնակցի հայտը ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝ «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը, չներկայացնելու հիմքով մերժելը, իրավաչափ չեն, որպիսի պայմաններում խախտվել են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները, հետևաբար նաև՝ Մասնակցի իրավունքները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն

դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է

Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.06.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/34 ծածկագրով կայացրած որոշմամբ հաստատված հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում, գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Ավելին՝ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ … գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.06.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/34 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից կայացված «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ չէ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9115-2021 գրությամբ «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/148 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**